

Լեռնային Ղարաբաղի նոր սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվեի դիտորդական առաքելության միջանկյալ եզրակացություն

Նախապատմություն

2017թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղում (ԼՂ) տեղի ունեցավ նոր սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվե: Լեռնային Ղարաբաղի հանրապետությունն այժմ վերանվանվել է Արցախի Հանրապետություն (ԱՀ): Թեև ԼՂ Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչված չէ, «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպությունը վճռականորեն ողջունում է դե-ֆակտո իշխանությունների ցանկությունը՝ կազմակերպելու ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված տեղական ինքնակառավարում: Այդ ցանկության արտահայտումն ընդգծվել է իշխանությունների կողմից, որոնք հրավիրել են բազմաթիվ միջազգային դիտորդների, այդ թվում մեր խմբին, որը բաղկացած է՝

- Հանս-Յոխեն Շմիդթ (Գերմանիայում Հայաստանի նախկին դեսպան)
- Դոկտոր Հանս-Յուրգեն Զահորկա (Եվրոպական Միության արտաքին հարաբերությունների ամսագրի գլխավոր խմբագիր, Եվրախորհրդարանի նախկին անդամ)
- Դոկտոր Մայքլ Կամբեք (ՀԵԲ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար)
- Դարիա Զալեգնիչենկա (ՀԵԲ պատվիրակ)
- Հովհաննես Գրիգորյան (ՀԵԲ գործադիր ղեկավար)
- Տաթևիկ Հայրապետյան (ՀԵԲ ծրագրերի ղեկավար)

Մենք ամբողջովին պահպանել ենք ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունների պաշտոնական վարքագիծը:

Մեր դիտարկման բնույթը

Մեր դիտորդական առաքելությունը կարճաժամկետ էր և ներառում էր ճեպագրույցներ և տեղեկության տրամադրում հանրաքվեի նախօրեին և հանրաքվեի անցկացման օրը, զարգացումները, ինչպես նաև հարցազրույցներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլ դիտորդների հետ: Մեր առաքելությունը չի ներառել լրատվադաշտի մշտական դիտարկում, հանրաքվեին նախորդող և հաջորդող օրերի

երկարատև ուսումնասիրություն, մասամբ ձայների հաշվառման գործընթացի դիտարկում և այլն: Դիտորդական առաքելության նմանատիպ գործառնությունների իրականացման համար մենք ապագայում առաջարկում ենք կազմակերպել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ լայնամասշտաբ դիտորդական առաքելություն: Մենք բաժանվել ենք երկու խմբի՝ հյուսիս և հարավ ուղղություններով: Ընտրատեղամասերի ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով՝ առանց տեղական իշխանությունների հետ նախապես համաձայնեցնելու: Տեղական իշխանությունների որևէ ներկայացուցիչ մեզ չի ուղեկցել: Մեր առաքելության ընթացքում դիտարկեցինք ընդհանուր առմամբ 31 ընտրատեղամաս 279-ից (+1 Երևանում)՝ սկսած հարավում Հաղբուֆից մինչև հյուսիսում տեղակայված Դրմբոն՝ ծածկելով 2016 ընտրող ունեցող Հաղբուֆի ընտրատեղամասից մինչև ընդամենը 19 ընտրող ունեցող Վերին Սզնեք գյուղի տեղամասը:

Թափանցիկ միջավայրի ապահովում դիտորդների համար

Մենք վճռականորեն ողջունում ենք Արցախի իշխանություններին, որոնք մեզ թույլ տվեցին միանգամայն ազատորեն տեղաշարժվել Արցախում (այդ թվում՝ սակավորեն բնակեցված բուֆերային գոտու մոտ) և հարցեր ուղղել ընտրություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող անձանց: Զգալի էին ջանքերը, որոնք թույլ տվեցին մեզ և այլ դիտորդական խմբերին ձեռք բերել լիարժեք, ամբողջական ու թափանցիկ տեղեկություններ, և մենք կոչ են անում միջազգային հանրությանը գնահատել այդ ջանքերը:

Ինչո՞ւ կատարել ընտրություն/դիտորդական առաքելություն Արցախում

Դիտորդական առաքելություն իրականացնելով՝ մենք փորձ չենք կատարում որևէ կերպ ազդել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վրա: Մենք ընդունում ենք, որ ժողովրդավարական կառավարումը անհերքելի արժեք է, և դա շեշտվում է միջազգային հանրության և ԵԱՀՄ Մինսկի խմբի կողմից, որի աշխատանքներն ուղղված են հակամարտող կողմերին խաղաղությանը նախապատրաստելուն: Ժողովրդավարական սոլիդարությունը պահանջում է, որ մենք նախապատվություն տանք և խթանենք մարդու հիմնարար իրավունքները ժողովրդավարական ինքնակառավարման համակարգում, և հենց այս համատեքստում էլ իր առաքելությունն է ծավալում մեր դիտորդական խումբը: Մենք մասնավորապես կոչ ենք անում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին՝ ցուցաբերելու տեխնիկական աջակցություն և անցկացնելու դիտորդական առաքելություն տեղական մակարդակում անցկացվող ընտրություններին՝ որպես մարդկային զարգացմանն ուղղված օգնություն,

անգամ եթե սա իրականացվում է դեռևս չճանաչված երկրում: Սա կարող է խթանել տեղական մակարդակում ժողովրդավարության մշակույթը և օժանդակել տեղական բնակչությանը՝ պատրաստ լինելու, հակամարտության հանգուցալուծմանը հաջորդող ժամանակահատվածին, ինչպես նախատեսում է ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Ընտրատարածքներում արձանագրված դրական դիտարկումներ

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովում վարչարարական անձնակազմի պատրաստվածության մակարդակը բարձր էր, անգամ հեռավոր սակավաբնակ գյուղերում:
- Առաքելության իրականացման պահին վարչարարական անձնակազմը բաղկացած էր 5-ից 8 անդամից: Կար պարտականությունների հստակ բաժանում, և պահպանվում էր սահմանված ընթացակարգը:
- Ընտրատեղամասերից մեկում միաժամանակ հայտնվեց ընտրողների մեծաքանակ խումբ, ինչի հետևանքով ընտրահանձնաժողովի նախագահը խնդրեց սենյակում մնալ միայն 2 հոգի և ներկայանալ մաս-մաս՝ կուտակումներից խուսափելու համար:
- Ընտրատեղամասերի ներսում և դրանցից դուրս գտնվող ընտրողներին ուղղված հարցերի արդյունքում որևէ խախտում կամ միջամտություն չի արձանագրվել:
- Համաձայն ընտրական օրենսգրքի՝ ընտրացուցակները կախված էին ընտրատեղամասերում:
- Որևէ քաղաքական գովազդ չի արձանագրվել ընտրատեղամասերում:
- Ընտրացուցակները թափանցիկորեն ներկայացված են եղել ընտրատեղամասերին դրսում կամ ներսում:
- Ընտրողներին թույլատրվել է քվեարկել բացառապես այն ընտրատեղամասերում, որտեղ գրանցված են եղել:
- Խախտումներ կամ ճնշումների գործադրման դեպքեր չեն արձանագրվել, ընդհանուր իրավիճակը հանգիստ էր: Յուրաքանչյուր ընտրատեղամասի առջև կար նվազագույնը մեկ ոստիկան:
- Ընտրատեղամասերի վարչարարական անձնակազմի անդամները ներկայացնում էին պահանջվող տեղեկատվությունը դիտորդներին՝ ապահովելով լիարժեք թափանցիկություն:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ամբողջությամբ համագործակցում էր դիտորդներին հետ՝ ապահովելով լիարժեք թափանցիկություն:
- Առկա է բողոքարկման ընթացակարգ, որը գործում է մինչև փետրվարի 23-ը: Այս պահի դրությամբ որևէ բողոք ԿԸՀ-ն չի ստացել:
- Ընտրողները փաստել են, որ անգամ հեռավոր գյուղերում հանրաքվեի բնույթի և ընթացակարգի մասին տեղեկատվությունը հասանելի է եղել: Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն անցկացրել են ճեպագրույցներ՝ տեղեկատվության մակարդակը բարձրացնելու և ակտիվ մասնակցության ապահովման համար: Այդուհանդերձ, ընդդիմադիրների կողմից դա դիտարկվել է որպես կառավարման ռեսուրսների օգտագործում՝ հոգուտ սահմանադրական փոփոխության:
- Ընտրողների մասնակցության մակարդակը միջինից բարձր է եղել՝ ի համեմատ եվրոպական ընտրությունների կամ հանրաքվեների: Ստեփանակերտում մասնակցության մակարդակը համեմատաբար ցածր է եղել:

Ընտրատարածքներում արձանագրված բացասական դիտարկումներ

- Ինչպես և Լեռնային Ղարաբաղում իրականացված առաջին դիտորդական առաքելության ժամանակ, այս անգամ ևս քվեատուների վրա առկա կնիքները և նշումներն արված էին ոչ նույնատիպ ձևով: 31 ընտրատեղամասերից 6-ում միայն պասստմասե փական էր օգտագործված՝ առանց կողպեքի: 3 ընտրատեղամասում կողպեքը կնքված և ստորագրված չէր: 2 ընտրատեղամասում կողպեքը ճիշտ տեղում չէր տեղադրված:
- Քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ, հատկապես Դաշնակցություն կուսակցությունը բողոքում էր կառավարական ռեսուրսի չարաշահումից՝ հոգուտ սահմանադրական փոփոխության: Մասնավորապես, քննադատական ձայները քիչ լսելու են եղել հեռուստատեսությամբ, մինչդեռ ակտիվորեն լուսաբանվել են «Այո» քարոզարշավի ներկայացուցիչները և կողմնակիցները:
- Սահմանադրական փոփոխության կողմնակիցները շեշտադրումը կատարել են Արցախի վերանվանման փաստի վրա, և փոփոխության անհրաժեշտության հապճեպությունը բացատրվել է 2016 թվականի ապրիլին տեղի ունեցած ռազմական գործողություններով և դրանից հետո Ադրբեյջանի կողմից պատերազմական

սպառնալիքի աճով, այն դեպքում, երբ ընդդիմության ներկայացուցիչները բողոքում էին նոր սահմանադրության քաղաքական հետևանքների մասին:

- Ընդդիմության ներկայացուցիչները քիչ հասանելիություն են ունեցել ընտրատեղամասերում ներկա գտնվելու և հաշվարկներ իրականացնելու գործընթացին: Այդուհանդերձ, նշենք, որ սա ոչ այնքան փաստում է սահմանափակումների, որքան ընդդիմության ներկայացուցիչների սակավաթվության մասին:
- 5-րդ ընտրատարածքի ընտրատեղամասերից մեկում, որտեղ ընթանում էին նաև մեծամասնական ընտրություններ, մենք դիտարկել ենք, որ հանձնաժողովի անդամներից մեկը 2 քվեաթերթիկ է տրամադրել ընտրողին: Երբ հանձնաժողովի անդամները նկատել են դիտորդներին, բացատրել են, որ դա կապված է մեծամասնական քվեարկության հետ, սակայն անմիջապես դադարեցրել են դա:
- Ընտրատեղամասերի 20 տոկոսի տարածքում կային մարդիկ, ովքեր որևէ առնչություն չունեին հանձնաժողովի աշխատանքներին հետ, սակայն կանգնած էին ընտրատեղամասի դրսում: Այդուհանդերձ, ընտրողներից ոչ ոք դա ընտրական օրենսգրքի խախտում չի դիտարկել. դա ավելի շատ մշակութային երևույթ է, քանի որ ընտրատեղամասը համարվում է տարածք, որտեղ մարդիկ կարող են քննարկումներ անցկացնել:
- Ընտրատեղամասերը հարմարեցված չէին հատուկ կարիքներ ունեցող մարդկանց, և, համապատասխանաբար, վերջիններիս մասնակցությունը անհնար էր: